

ՀՀ ԱՎԾ ԱՐՀՄԻՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ-ՓԵՏՐՎԱՐԻՆ

2018թ. հունվարի 18-ին ՀՀ ԱՎԾ դահլիճում տեղի է ունեցել ՀՀ ԱՎԾ արհեստակցական կազմակերպության խորհրդի ընդլայնված անդրանիկ նիստը:

Օրակարգում ներառված էր 2017 թվականի կատարած աշխատանքների ամփոփումը, ինչպես նաև «հունվարի 28-ը» որպես տոն նշելու հարցը և մի շարք այլ ընդհանուր հարցեր:

Նիստի ընթացքում ՀՀ ԱՎԾ արհմիության նախագահ տիկին Մ. Պետրոսյանը շնորհակալագրեր հանձնեց այն աշխատակիցներին, ովքեր տարվա ընթացքում ակտիվորեն մասնակցել են արհմիութենական աշխատանքներին:

Արհմիության երիտասարդ ակտիվ անդամներ Լիլիթ Կարապետյանը, Արմենուի Մարտիկյանը, Արուս Գալստյանը, Լաուրա Ավետիսյանը և Վրեժ Մաճկալյանը պարգևատրվեցին Հայաստանի պետական հիմնարկների, ՏԻՄ-երի և հասարակական սպասարկման աշխատողների ճյուղային հանրապետական արհմիության պատվոգրերով:



2018թ. հունվարի 26-ին ՀԱՄԿ-ի դահլիճում տեղի է ունեցել պետհիմնարկների, ՏԻՄ-երի և հասարակական սպասարկման աշխատողների ճյուղային հանրապետական արհմիության խորհրդի նիստը, որի օրակարգային հարցերի շրջանակում լսվել ու գնահատվել է ճյուղային ՀԱՄԿ նախագահի 2017թ. կատարած աշխատանքը, ներկայացվել է անդամ կազմակերպությունների ֆինանսական տարվա բյուջեի կատարումը, ինչպես նաև որոշվել է հրավիրել ՀԱՄԿ 7-րդ համագումարը:

Խորհրդի նիստին իր ակտիվ մասնակցությունն է ցուցաբերել ՀՀ ԱԿԾ արհեստակցական կազմակերպության նախագահ տիկին Մ. Պետրոսյանը:



ՀՀ ԱՎԾ արհմիությունը 2018թ. հունվարի 26-ին Հայոց բանակի օրվա կապակցությամբ ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տղամարդ աշխատակիցներին անակնկալ նվերներ է մատուցվել:




2018թ. փետրվարի 2-ին ՀՀ ԱՎԾ դահլիճում տեղի է ունեցել ՀՀ ԱՎԾ արհմիության խորհրդի 2-րդ նիստը, որի օրակարգում քննարկվել են մի շարք կազմակերպչական հարցեր, մասնավորապես՝ ս.թ. փետրվարի 23-ին կայանալիք համագումարի պատվիրակների ընտրությունը, Կանանց միջազգային օրվա՝ մարտի 8-ի նվերների հանձնման գործընթացը և այլն:


2018թ. փետրվարի 23-ին «Անի պլազա» հյուրանոցի «Անի» սրահում տեղի է ունեցել Հայաստանի պետական հիմնարկների, ՏԻՄ-երի և հասարակական աշխատողների ճյուղային հանրապետական արհմիության 7-րդ համագումարը:

Համագումարին ելույթ է ունեցել ՀՀ ԱՎԾ արհեստակցական կազմակերպության նախագահ տիկին Մ. Պետրոսյանը՝ ելույթը եզրափակելով ՀՀ ԱՎԾ նախագահ պարոն Ս. Մնացականյանի ուղերձի ընթերցմամբ:

Համագումարին որպես պատվիրակներ մասնակցել են ՀՀ ԱՎԾ արհմիության երիտասարդ անդամներ Լիլիթ Կարապետյանը և Վրեժ Մաճկալյանը, իսկ որպես հյուր հրավիրված էր Վարդան Արևշատյանը:



2018թ. փետրվարի 23-ին ՀՀ պետական մարմինների աշխատակիցների միջև տեղի է ունեցել հրաձգության հանրապետական մրցույթ, որի ընթացքում կանանց պայքարում երկրորդ պատվավոր հորիզոնականը զբաղեցրել է ՀՀ ԱՎԾ ներկայացուցիչ Ալինա Գրիգորյանը:



Լրատվական կայքերի անդրադարձը տես՝ հետոյալ էլեկտրոնային էջերում.
<http://www.minsportyouth.am/noroutyouner/pargevatrvel-en-petakan-marminneri-ashkhata.html>
<http://www.slaq.am/arm/news/1232121/>